ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՐԻԲԵԿՅԱՆ ԲԵՆԻԿ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԽԵՂՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՎՐԱ

ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ
հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Նաիրա Ռաֆիկի Հակոբյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Մելս Պարգևի Մկրտումյան**
	հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Նարինե Ասքանազի Հարությունյան**
Առաջատար կազմակերպություն՝	Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024թ.-ի հունվարի 30-ին ժամը 12.00-ին, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի թիվ 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023 թ.-ի դեկտեմբերի 25-ին:

Հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, հոգեբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Կամո Վարդանյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Մանիպուլյացիայի ֆենոմենը ներկայումս լայնորեն քննարկվող խնդիրներից մեկն է: Դրա արդիականությունը պայմանավորված է ժամանակակից հասարակության մեջ մանիպուլյատիվ տեխնոլոգիաների կործանարար հետևանքներով, որոնք դրսևորվում են հասարակայնորեն նշանակալի բարոյական չափանիշների ոչնչացման, արժեքների և գաղափարների վերափոխման, իրականության ձևախեղման միջոցով: Ուստի, մանիպուլյացիայի հիմնախնդիրը քննարկման առարկա է դարձել տարբեր գիտությունների (էթիկա, քաղաքականություն, մշակութաբանություն, սոցիոլոգիա, հոգեբանություն և այլն) ներկայացուցիչների շրջանում: Դրանով է պայմանավորված, թերևս, հիմնախնդրի բազմակողմանիությունն ու քննարկման լայն շրջանակները: Մանիպուլյացիայի հիմնախնդրի կարևորությունը շեշտադրում էին դեռևս անտիկ աշխարհի փիլիսոփաները՝ բնակչության զանգվածները համեմատելով մարդկային հոտի հետ, որի կառավարումը պահանջում էր հատուկ ունակություններ և որոշակի հնարքների իմացություն: Պատմության նոր դարաշրջանում ի հայտ եկած մտածողները, որոնք առանձնահատուկ ուշադրություն էին դարձնում ժողովրդական զանգվածների վարքային առանձնահատկություններին, մանիպուլյացիան դիտարկում էին, գերազանցապես, բանականության դրսևորումների տեսանկյունից: Մանիպուլյացիայի հիմնախնդիրը նորովի արժևորվեց 19-րդ դարի վերջին-20-րդ դ. սկզբին, երբ քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացներն ուղղեցին ժամանակակիցների մտքերը դեպի զանգվածային հասարակության և ամբոխի հոգեբանության ուսումնասիրությունը: Աստիճանաբար բնութագրվեցին «ամբոխ», «ամբոխի վարքագիծ», «ամբոխի կառավարում» հասկացությունները, առանձնացվեցին զանգվածների կառավարման հուզական (հույզեր, տրամադրության փոփոխություններ) և ռացիոնալ (արժեքներ, դիրքորոշումներ) մակարդակները, ինչի արդյունքում ժամանակակից հոգեբանական գիտակարգում նկարագրվեցին զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթները: 21-րդ դարում թեև որոշակի առումով շարունակում են արդիական մնալ մանիպուլյացիայի վերաբերյալ ձեռք բերված կարծիքներն ու բնութագրերը, այդուհանդերձ, գրեթե բոլոր հետազոտողների կողմից շեշտադրվեց տեղեկատվական հասարակության պայմաններում մանիպուլյացիայի հիմնախնդրի արդիականությունը:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել մանիպուլյացիայի ներգործությունը զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների վրա իրականության վերաբերյալ տեղեկատվության ձևախեղման համատեքստում՝ կապված կոգնիտիվ ոլորտի ոճերի և առանձնահատկությունների հետ:

Հետազոտության նպատակի իրականացման համար անդրադարձել ենք հետևյալ կոնկրետ **խնդիրներին՝**

- **տեսական՝**

- ներկայացնել մանիպուլյացիա ֆենոմենի բազմահայեցակետ դիտարկումը,
- ներկայացնել ժամանակակից տեղեկատվական հասարակության սոցիալ-հոգեբանական պատկերը՝ մանիպուլյացիաների կիրարկման, ընկալման և ներքնայնացման համատեքստում,

➢ **մեթոդաբանական՝**

- բնութագրել մանիպուլյացիայի ազդեցության սոցիալ-հոգեբանական մեխանիզմները, ներգործության մեթոդները զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների վրա,

➢ **փորձարարական՝**

- փորձարարական հետազոտության միջոցով վերհանել կոգնիտիվ երկբևեռ ոճերի դրսևորումների առանձնահատկությունները,
- բացահայտել կոգնիտիվ ոճերի դրսևորման սեռատարիքային, սոցիալական և կրթական համատեքստը,
- վերհանել արտաքին միջավայրային ազդեցություններից կախվածության, ինչպես նաև սոցիալական վստահության աստիճանի մակարդակները սեռատարիքային, սոցիալական և կրթական բաղադրիչներով,
- համահարաբերակցային վերլուծության ենթարկել կոգնիտիվ երկբևեռ ոճերի և տեղեկատվության մանիպուլյացիայի փոխպայմանավորվածությունը՝ կապված զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների վրա ներգործությամբ:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ մանիպուլյատիվ ներգործությամբ տեղեկատվության ձևախեղված զանգվածային ընկալումները պայմանավորված են կոգնիտիվ երկբևեռ՝ իմպուլսիվության-ռեֆլեկտիվության, վերլուծականության-սինթետիկության ոճերի դրսևորումների առանձնահատկություններով, ինչպես նաև.

- արտաքին միջավայրային ազդեցություններից կախվածությամբ,
- կոգնիտիվ իմպուլսիվ և սինթետիկ ոճերի արտահայտվածությամբ, սոցիալական վստահության բարձր աստիճանով:

Հետազոտության օբյեկտն է՝ զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների վրա մանիպուլյատիվ ներգործությունը կոգնիտիվ ոճերի համատեքստում:

Հետազոտության առարկան է՝ զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների վրա մանիպուլյատիվ ներգործության և կոգնիտիվ ոճերի համահարաբերակցությունը:

Մեթոդաբանական և տեսական հիմքերը: Հետազոտության տեսամեթոդական հիմք են հանդիսացել Ֆ. Զիմբարդոյի, Ռ. Չալդինիի հոգեբանական ներգործության, Դ. Մայերսի սոցիալական զանգվածների վրա մանիպուլյատիվ ազդեցության, Գ. Շիլլերի գիտակցության մանիպուլյացիայի, Ա. Նալչաջյանի, Ե. Դոցենկոյի մոտեցումներն ու ներկայացրած հիմնադրույթները

մանիպուլյատիվ զանգվածային սոցիալ-հոգեբանական ներգործության առանձնահատկությունների, Ռ. Ուիտկինի, Ջ. Կագանի, Վ. Կոլզայի գիտամեթոդական աշխատությունները կոգնիտիվ ոճերի, արտաքին միջավայրային ազդեցություններից կախվածության, Ջ. Ռոտտերի հայացքները սոցիալական վստահության վերլուծության վերաբերյալ:

Աշխատանքում կիրառվել են հետազոտության հետևյալ մեթոդները՝

- Կենսագրական տվյալների հավաքագրման մեթոդը
- Թեստի մեթոդը.
- Գ. Ուիտկինի «Ներառված ֆիգուրների» թեստը (Embedded Figures Test, EFT):
- Ջ. Կագանի «Նմանատիպ նկարների համեմատության» թեստը (Matching familiar figures test, MFFT):
- Վ. Կոլզայի «Բառերի ազատ տեսակավորման» մեթոդիկան (Ռ. Գարդների մեթոդիկայի մոդիֆիկացիան):
- Ջ. Ռոտտերի «Միջանձնային սոցիալական վստահության սանդղակ» մեթոդիկան (հարմարեցված Ս. Դոստովալովի կողմից)
- Գիտափորձը
- Համահարաբերակցային վերլուծությունը JASP 0.17.3.0 վիճակագրական ծրագրի կիրառմամբ:

Աշխատանքի գիտական նորույթը: Մանիպուլյատիվ ներգործությամբ տեղեկատվության ձևախեղված զանգվածային ընկալումների ձևավորման գործընթացում բացահայտվել է կոգնիտիվ երկբևեռ ոճերի փոխկապվածությունը արտաքին միջավայրային ազդեցությունից և սոցիալական վստահության աստիճանից:

Տեսական նշանակությունը: Տեսական վերլուծության է ենթարկվել մանիպուլյացիայի ֆենոմենը տարբեր գիտակարգերում՝ ցուցաբերելով ինտեգրատիվ մոտեցում, ներկայացվել են մանիպուլյացիայի սոցիալ-հոգեբանական մեխանիզմներն ու մանիպուլյատիվ ներգործության մեթոդները տեղեկատվական հասարակության պայմաններում:

Կիրառական նշանակությունը: Բացահայտվել են կիրառական նշանակություն մանիպուլյատիվ ներգործության առավել զգայուն կոգնիտիվ ոճերը, ինչը մեծ նշանակություն ունի հաղորդակցական լայն դաշտ ունեցող մասնագիտություններով մասնագետների պատրաստման, վերապատրաստման, մանիպուլյատիվ ներգործություններից պաշտպանելու, ինչպես նաև զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների ընկալման գործընթացում տեղեկատվական ձևախեղումների բացահայտման համատեքստում:

Պաշտպանության ներկայացվող դրույթներն են՝

1. Մանիպուլյացիան ձևախեղված տեղեկատվություն է, որն իր բացասական հետագիծն է թողնում իրականության վերաբերյալ տարաբնույթ երևույթների զանգվածային սոցիալ-հոգեբանական ընկալումների վրա՝ հանգեցնելով տեղեկատվական ընկալման աղճատումների:

2. Առկա են ակնառու կապեր կոգնիտիվ երկբևեռ ոճերի և մանիպուլյատիվ ներգործության միջև, որոնք նպաստում են զանգվածային սոցիալ-հոգեբանական ընկալումների աղճատումներին:

3. Մանիպուլյատիվ ներազդման նկատմամբ առավել զգայուն են այն անձինք, ովքեր զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների ընկալումներում բնորոշվում են կոգնիտիվ երկբևեռ ոճերից իմպուլսիվության և սինթետիկության ծայրահեղ շեշտվածությամբ:

4. Առկա է սեռատարիքային առանձնահատկություններով պայմանավորված կոգնիտիվ ոճերի դրսևորման միտվածություն, որը կանանց շրջանում արտահայտվում է իմպուլսիվության գերակայությամբ տղամարդկանց համեմատ:

5. Առկա են կոգնիտիվ ոճերից իմպուլսիվության և սինթետիկության, ինչպես նաև ռեֆլեկտիվության և անալիտիկության փոխպայմանավորվածություններ տեղեկատվության մանիպուլյատիվ ներգործության համատեքստում:

6. Զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների վրա մանիպուլյատիվ ներգործությունը պայմանավորված է սոցիալական վստահության աստիճանի դրսևորման առանձնահատկություններով:

7. Արտաքին միջավայրային ազդեցություններից կախվածության բարձր աստիճանը ուղեկցվում է սոցիալական վստահության աճով: Արտաքին միջավայրային ազդեցություններից թույլ արտահայտված կախվածության աստիճանի պարագայում թուլանում է տեղեկատվության մանիպուլյատիվ ներգործությունը:

Հետազոտության արդյունքների հուսալիությունն ու հավաստիությունը հիմնավորված են հիմնախնդրին առնչվող աղբյուրների ընտրությամբ և վերլուծությամբ, հետազոտության տեսամեթոդական հիմքի ներկայացմամբ, աշխատանքի նպատակին համապատասխան խնդիրների մշակմամբ, հավաստի փորձարարական մեթոդական գործիքակազմի ընտրությամբ, ստացված արդյունքների բազմակողմանի վերլուծությամբ և մեկնաբանմամբ:

Աշխատանքի փորձարկումն ու հրապարակային քննարկումը: Հետազոտության իրականացման ընթացքն ու ստացված արդյունքները քննարկվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնում: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հոգեբանական դիտարանում, «Հույս և ապագա» ՀԿ-ում մասնագիտական վերապատրաստման և որակավորումների բարձրացման մասնագետների, «ԲԱՇՕՅԼ» ՍՊԸ-ի «ԲԵՍԹ ՌԵԱԼԻԹԻ» ՍՊԸ-ի աշխատակիցների շրջանում, Լոռու և Վայոց Ձորի մարզերի մարզպետարանների աշխատակիցների և ազգաբնակչության շրջանում: Հետազոտության արդյունքները քննարկվել են «Մրցունակ կրթության և գիտության հիմնախնդիրները հարափոփոխ աշխարհում» (Երևան, 2023), «Պատերազմի սոցիալ-հոգեբանական

հետևանքները» (Երևան, 2022), «Հետազոտական կարողությունների զարգացում» (Երևան, 2021) միջազգային գիտաժողովներում:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է 3 գլխից, ներածությունից, եզրակացությունից, գրականության ցանկից, հավելվածից, 14 աղյուսակից և 8 գծապատկերից: Ծավալը կազմում է 146 տպագիր էջ, առանց հավելվածի՝ 141 էջ: Օգտագործվել է 239 աղբյուր՝ հայերեն և օտար լեզուներով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախուսության ներածության մեջ ցույց է տրված թեմայի արդիականությունը, ներկայացված է աշխատանքի նպատակը, սահմանված են հետազոտության վարկածը, օբյեկտը, առարկան, ձևակերպված են հետազոտության խնդիրները և տեսական գիտամեթոդաբանական հիմքերն ու կիրառված մեթոդները: Բացահայտված է աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը, գիտական նորույթը, նշված են պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին **«Մանիպուլյացիայի ուսումնասիրման տեսական հիմքերը»** գլխում ներկայացվում և վերլուծության են ենթարկվում մանիպուլյացիա երևույթի վերաբերյալ հոգեբանական գրականության մեջ առկա տեսական և մեթոդաբանական մոտեցումներն ու հայեցակարգերը, դիտարկվում են մանիպուլյացիա երևույթի կիրարկման հոգեբանական մեխանիզմները, առանձին հնարքները: Առաջին «Մանիպուլյացիա հասկացությունը սոցիալական հոգեբանության մեջ» ենթագլխում ներկայացվում են Ս. Գ. Կարա-Մուրզայի, Ե. Դոցենկոյի, Վ. Պ. Շեյնովի, Ա. Գրամշիի սոցիալ-հոգեբանական մանիպուլյատիվ ներգործության, Գ. Լեբոնի, Զ. Ֆրոյդի, Վ. Մ. Բեխտերևի զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների, Է. Շոստրոմի, Է. Բեռնի, Վ. Ն. Պանկրատովի, Ե. Ն. Ռյադչիկովայի, Գ. Ի. Կոլեսնիկովայի, Վ. Ն. Պանկրատովի և այլոց մոտեցումները և հայեցակարգերը:

Երկրորդ՝ «Տեղեկատվական հասարակության բնութագրումը» ենթագլխում ներկայացվում է ժամանակակից տեղեկատվական հասարակության բնութագրումը, բնորոշ առանձնահատկությունները, վերլուծության են ենթարկվում տեղեկատվական հասարակության ձևավորման համատեքստում ինֆոդեմիա, ինֆոդեմիկ Ես-կերպար, վերջինիս ձևավորման սոցիալ-հոգեբանական հիմնական մեխանիզմները, ինչպես նաև ներկայացվում են կիբեռսոցիալականացում երևույթը բնորոշող հիմնական առանձնահատկությունները:

Երրորդ՝ «Մանիպուլյացիայի սոցիալ-հոգեբանական մեխանիզմները» ենթագլխում ներկայացվում են մանիպուլյացիայի սոցիալ-հոգեբանական մեխանիզմները, մանիպուլյատիվ ներգործության կազմակերպման և իրագործման փուլերը, ինչպես նաև մանիպուլյատիվ խոսքայի հնարքները, վերջիններիս կիրարկման և հոգեբանական ներգործության հիմնական առանձնահատկությունները:

Ատենախոսության երկրորդ **«Մանիպուլյացիաները և սոցիալ-հոգեբանական երևույթները»** գլխում վերլուծության են ենթարկվում զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների վերաբերյալ հոգեբանական գրականության մեջ առկա տեսական մոտեցումները, ներկայացվում է մանիպուլյատիվ ներգործության իրականացումը, մեթոդաբանությունը զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների, ինչպես նաև »հասարակական և միջանձնային հարաբերությունների համատեքստում:

Երկրորդ գլխի առաջին՝ «Մանիպուլյացիաների ազդեցությունը զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների վրա» ենթագլխում դիտարկվում են սոցիալական կարծրատիպերի, դիրքորոշումների, մենթալիտետի, նախապաշարմունքների, հասարակական կարծիքի առանձնահատկությունները, վերջիններիս մանիպուլյատիվ ներգործության, առանձին մանիպուլյատիվ խոսքային հնարքների կիրառման միջոցով ձևավորման, ինչպես նաև ձևախեղման մեխանիզմներն ու ընթացակարգը:

Երկրորդ գլխի երկրորդ՝ «Մանիպուլյատիվ ներգործության մեթոդների բնութագրումը» ենթագլխում ներկայացվում է հաղորդակցման գործընթացում, մանիպուլյացիայի, մանիպուլյատիվ խոսքի դերի և նշանակության վերաբերյալ Բ. Ն. Բեսսոնովայի, Ն. Գ. Լիմնատիսի, Ռ. Ն. Պանկրատովի, Ռ. Հարրիսի, Գ. Շիլլերի մոտեցումներն ու հայեցակարգերը, սոցիալ-տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման համատեքստում ներկայացվում է մոնիթորինգի՝ որպես սոցիալ-մշակութայուն միջավայրում զանգվածային սոցիալ-հոգեբանական միջավայրի ուսումնասիրման, մանիպուլյատիվ հնարքների վերհանման մեթոդի կիրարկման առանձնահատկությունները, ներկայացվում են զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների վրա մանիպուլյատիվ ներգործության այլ հնարքներ («ջախջախիչ» տեղեկատվության հաղորդում, տեղեկույթի սուբյեկտիվ ընկալման, մեկնաբանման միջոցով հայտնում և այլն):

Երկրորդ գլխի երրորդ՝ «Մանիպուլյացիայի տեսակները գործունեության տարբեր ոլորտներում» ենթագլխում ներկայացվում են մանիպուլյացիայի դրսևորման առանձնահատկությունները և տեսակները սոցիալական, քաղաքականկ, միջանձնային և այլ ոլորտներում:

Ատենախոսության երրորդ՝ **«Իրականության և տեղեկատվության ձևախեղմանն ուղղված մանիպուլյացիայի ազդեցությունը զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների վրա փորձարարական հետազոտություն»** գլխում ներկայացված են իրականացված հետազոտությունների ողջ ընթացքը և ստացված արդյունքների վերլուծությունը, որոնց նշանակալի արդյունքները զետեղված են բազմաթիվ աղյուսակներում և գծապատկերներում:

Փորձարարական հետազոտության մեկնարկին իրականացվել է հետազոտության մասնակիցների կենսագրական տվյալների հավաքագրում: հետազոտության մասնակիցներն ընդգրկվել են ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերից՝ հավասար բաշխման ներգրավվածությամբ՝ 140-ական մասնակից: Նույն հավասար բաշխումը պահպանել ենք սեռատարիքային

ընդգրկվածության տեսանկյունից՝ 3 տարիքային խմբերից յուրաքանչյուրում ներառվել են կանանց և տղամարդկանց 140-ական մասնակից։ Կրթական մակարդակի աստիճանով առավել մեծ ներգրավվածություն են ունեցել միջին մասնագիտական օղակի և բակալավրի աստիճան ունեցողներ մասնակիցները։

Հաջորդիվ իրականացվել են հետազոտության մասնակիցների կոգնիտիվ ոճերի ուսումնասիրությանը նվիրված մեթոդիկաները, որոնցից առաջինը ներկայացվում են արտաքին միջավայրային ազդեցություններից անկախության/կախվածության կոգնիտիվ ոճի բացահայտմանն ուղղված Ուիտկինի թեստի ամփոփ տվյալները, որոնք ներկայացնում ենք դեսկրիպտիվ վիճակագրական մեթոդի միջոցով։ Տվյալները մշակվել են JASP 17.01.01 վիճակագրական ծրագրի միջոցով։

Բոլոր երեք տարիքային խմբերում ստանդարտ շեղումը գրանցվել է 0.607-0.650 միավորների միջակայքում, ինչը խոսում է նրա մասին, որ մասնակիցների պատասխաններում չեն հանդիպել կտրուկ տարբերվող պատասխաններ, իսկ մաքսիմալ բարձր ցուցանիշները գրանցվել են 2.740-2.930 միավորների միջակայքում՝ երրորդ տարիքային խմբում փոքր ինչ նվազման միտումով։

Հետագա հետազոտության ընթացքում ստացված տվյալների մշակման վալիդությունը ապահովելու նպատակով անհրաժեշտ էր հիմնավորել ստացված ցուցանիշների բաշխման առանձնահատկությունը։ Տարիքային երեք խմբերի պատասխանները չեն համապատասխանում նորմալ բաշխման սկզբունքին։ Կիրառելով Շապիռո-Ուիլկի նորմալ բաշխման թեստը՝ պարզվել է, որ Ուիտկինի թեստի արդյունքներով բոլոր սեռատարիքային խմբերում նույնպես արդյունքները շեղվում էին նորմալ բաշխման օրինաչափությունից։

Ըստ սեռային հատկանիշի՝ բոլոր երեք խմբերում բացահայտվեցին Ուիտկինի թեստի արդյունքների վարիատիվության գործակիցները։ Առավել մեծ տատանումներ հանդիպում են կանանց մոտ բոլոր երեք տարիքային խմբերում՝ երրորդ խմբում վարիատիվության շեշտադրման որոշակի միտվածությամբ։ Ուսումնասիրվող տարիքային առաջին և երկրորդ խմբերում երկու սեռերի դեպքում էլ ձևավորվում է արտաքին միջավայրային ազդեցություններից անկախության աստիճանի դրսևորման համեմատաբար կայունություն։ Տարիքային երրորդ խմբի պատասխանները ցույց են տալիս, որ տատանումները միջավայրային ազդեցություններից անկախության/կախվածության աստիճանների միջև ավելի հաճախ են հանդիպում, չնայած նրան, որ պահպանվում է դեպի կախվածության աստիճան կողմնորոշվելու որոշակի միտվածությունը՝ հատկապես կանանց շրջանում։

Ուիտկինի թեստի արդյունքներով վերլուծվել են նաև բոլոր սեռատարիքային խմբերում պատասխանների միջին ցուցանիշները՝ ըստ մասնակիցների կրթական մակարդակի։ Վարիատիվության գործակիցը գրեթե բոլոր սեռատարիքային, սոցիալական և կրթական ենթախմբերում արտահայտված է 0.111-0.397 միավորների միջակայքում և ներկայացված է

ընդունելի փոքր տատանումներով: Դա նշանակում է, որ ընտրված սոցիալական և կրթական ենթախմբերի ներսում մասնակիցների պատասխանները գրեթե համակարծիք են, միանման և համարժեք: Միակ տարբերությունը դիտվեց գյուղական շրջանի կին մասնակիցների ենթախմբում, ովքեր ունեին մագիստրոսի աստիճան: Նրանց պատասխանների վարիատիվության գործակիցը կազմեց 0.420 միավոր, ինչը թույլ է տալիս ենթադրելու, որ մագիստրոսի կրթական աստիճան ունեցող գյուղաբնակ կանանց պատասխանների որոշակի տատանումները պայմանավորված են գյուղական միջավայրում ոչ լիարժեք ադապտիվությամբ և այդ միջավայրի ազդեցությունից անկախության կոգնիտիվ ոճի որոշակի շեշտվածությամբ: Այդուհանդերձ, այս հարցին վերաբերող հիմնախնդիրն անհրաժեշտ է մանրամասնել հետագա հետազոտություններում:

Փորձարարական հետազոտության ընթացքում կիրառվել են նաև այլ մեթոդիկաներ կոգնիտիվ այլ ոճերի հոգեախտորոշման, ինչպես նաև զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների վրա մանիպուլյատիվ ներգործության գործընթացում դրանց դերակատարման բացահայտման նպատակով: Այսպես, իրականացվել է Կագանի իմպուլսիվության/ռեֆլեկտիվության և Կոլգայի անալիտիկ/սինթետիկ կոգնիտիվ ոճերի հոգեախտորոշում:

բոլոր երեք խմբերում ցույց են տալիս իմպուլսիվ կոգնիտիվ ոճի հստակ արտահայտվածություն ռեֆլեկտիվ ոճի համեմատ: Ավելին, երևում է որոշակի միտվածություն դեպի ռեֆլեկտիվության աստիճանի նվազման՝ տարիքային հատկանիշով պայմանավորված: ՌԵֆլեկտիվ կոգնիտիվ ոճի առավել բարձր ցուցանիշներ հանդիպեցինք առաջին խմբում՝ 24%, որի ցուցանիշը նվազեց մյուս խմբերում, համապատասխանաբար, 16% և 5%: Կագանի թեստի արդյունքների համահարաբերակցական կապերը արտաքին միջավայրային ազդեցությունից անկախության/կախվածության կոգնիտիվ ոճի հետ կներկայացվեն ստորև:

Հաջորդիվ հետազոտվել է նաև անալիտիկ/սինթետիկ կոգնիտիվ ոճերի արտահայտվածությունը բոլոր երեք խմբերում: Կոլգայի թեստի իրականացման արդյունքները ներկայացվում են Գծապատկեր 6-ում: Կոլգայի թեստի արդյունքները բոլոր երեք խմբերում ցույց են տալիս սինթետիկ կոգնիտիվ ոճի հստակ արտահայտվածություն՝ անալիտիկ ոճի համեմատ: Ավելին, երևում է որոշակի միտվածություն դեպի անալիտիկ ոճին դրսևորման նվազում՝ տարիքային հատկանիշով պայմանավորված: Անալիտիկ կոգնիտիվ ոճի առավել բարձր ցուցանիշների հանդիպեցինք առաջին խմբում՝ 25%, որի ցուցանիշը նվազեց մյուս խմբերում, համապատասխանաբար, 16% և 5%:

Վերը ներկայացված կոգնիտիվ ոճերի դրսևորման առանձնահատկությունները և միտումները թույլ են տալիս ենթադրել, որ բոլոր ուսումնասիրված խմբերում կոգնիտիվ ոճերի դրսևորումները կարող են փոխկապակցված լինել միմյանց հետ և արտահայտվել որոշակի համահարաբերակցական կապերի միջոցով: Ուստի, իրականացվել է

համահարաբերակցական վերլուծություն բոլոր երեք խմբերում կոգնտիվ ոճերի փոխազդեցությունների բացահայտման նպատակով:
Համահարաբերակցական վերլուծության արդյունքում ձեռք է բերվել տեղեկատվություն՝ բոլոր երեք խմբերում կոգնիտիվ ոճերի փոխկապակցված կապերի վերաբերյալ: Բացահայտված կապերը ավելի պատկերավոր կերպով ներկայացնելու համար կազմվել են համապատասխան գծապատկերներ (Նկար 1):



Նկար 1. Կոգնիտիվ ոճերի համահարաբերակցական վերլուծության ամփոփ տվյալներ ըստ Սպիրմենի

Կոգնիտիվ ոճերի համահարաբերակցական վերլուծության արդյունքներով բացահայտվել են նշանակալի կապեր յուրաքանչյուր տարիքային խմբի ներսում: Մասնավորապես, պարզ է դարձել, որ առավել ուժեղ դրական համահարաբերակցական կապեր են գրանցվել իմպուլսիվության/ռեֆլեկտիվության և սինթետիկ/անալիտիկ կոգնիտիվ ոճերի միջև: Այլ խոսքերով, իմպուլսիվության բարձր մակարդակով անձանց մոտ դիտարկվում է նաև արտահայտված սինթետիկ կոգնիտիվ ոճի գերակայություն: Նույն փոխկապվածությունը նկատվում է ռեֆլեկտիվության - անալիտիկ կոգնիտիվ ոճերի դեպքում: Հատկանշական է, որ նշված ուժեղ կապերը գրանցվել են բոլոր երեք տարիքային խմբերում: Հաջորդ կարևոր եզրակացությունը կարող ենք անել վերը ներկայացված իմպուլսիվություն/ռեֆլեկտիվություն ու սինթետիկ/անալիտիկ կոգնիտիվ ոճերի, մի կողմից, և արտաքին միջավայրային ազդեցությունից անկախության/կախվածության ոճի համահարաբերակցական կապի վերաբերյալ: Այն ևս նկարագրվում է նշանակալի կապերի միջոցով, որոնք սակայն փոքր-ինչ թույլ են արտահայտված կոգնիտիվ ոճերի նախորդիվ ներկայացված կապերի համեմատ: Այս երևույթի հիմքում ընկած են արտաքին միջավայրային ազդեցություններից անկախության/կախվածության կոգնիտիվ ոճի տեսամեթոդական ժամանակակից բնութագրումները, որոնց համաձայն՝ անկախության/կախվածության երկբևեռ ոճի կառուցվածքում առանձնացվում են ոչ միայն ծայրահեղ երկու բևեռները, այլև սահմանվում են բևեռներից յուրաքանչյուրին հարող որոշակի միջանկյալ ցուցանիշներ:

Մեր հետազոտության արդյունքներով մենք հանգել ենք այն եզրակացության, որ ռեֆլեկտիվ և անալիտիկ կոգնիտիվ ոճերը դրսևորվում են արտաքին միջավայրային ազդեցություններից կախվածության դեպքում, եթե վերջինիս ցուցանիշները (≤2.5 միավոր) մոտիկ են կամ հարում են անկախության կոգնիտիվ ոճի նվազագույն մակարդակին (2.5 միավոր):

Համահարաբերակցական վերլուծության արդյունքները ներկայացնում են ևս մեկ հետաքրքիր փաստ: Կոգնիտիվ ոճերից արտաքին միջավայրային ազդեցություններից անկախության/կախվածության ոճը առավել ուժեղ կապերով է ներկայացված մյուս երկու ոճերի խմբերի հետ առաջին տարիքային խմբում, երբ Ռիտկինի թեստի ցուցանիշները (Սպիրմենի մեթոդ) կոռելացվում են Կագանի և Կոլգայի թեստերի ցուցանիշների հետ 0.742 և 0.737 միավորների մակարդակում: Երկրորդ և երրորդ տարիքային խմբերում այդ կապն արտահայտվում է արդեն, համապատասխանաբար, 0.64 (Կագանի թեստ, Խումբ 2), 0.628 (Կոլգայի թեստ, Խումբ 2), 0.39 (Կագանի թեստ, Խումբ 3) և 0.376 (Կոլգայի թեստ, Խումբ 3) միավորներով: Նմանատիպ արդյունքներ ստացել ենք նաև Կենդալի մեթոդի կիրառման արդյունքում: Այստեղ, առաջին տարիքային խմբում Ռիտկինի թեստի ցուցանիշները (Կենդալի մեթոդ) կոռելացվում են Կագանի և Կոլգայի թեստերի ցուցանիշների հետ 0.611 և 0.606 միավորների մակարդակում: Երկրորդ և երրորդ տարիքային խմբերում այդ կապն արտահայտվում է արդեն, համապատասխանաբար, 0.526 (Կագանի թեստ, Խումբ 2), 0.516 (Կոլգայի թեստ,

Խումբ 2), 0.322 (Կագանի թեստ, Խումբ 3) և 0.31 (Կոլգայի թեստ, Խումբ 3) միավորներով:

Կոռելացիոն վերլուծության արդյունքները խաչաձև ստուգելու և հետազոտության հուսալիության աստիճանը բարձրացնելու նպատակով կոռելացիոն կապերը բացահայտել ենք նաև Կենդալի մեթոդի համաձայն, որի ամփոփ տվյալները ներկայացնում ենք Նկար 2-ում:



Նկար 2. Կոգնիտիվ ոճերի համահարաբերակցական վերլուծության ամփոփ տվյալներ ըստ Կենդալի

Կոռելացիոն կապերի թուլացման միտվածությունը խոսում է նրա մասին, որ բացի կոգնիտիվ ոճերի ազդեցությունից, արտաքին միջավայրային ազդեցություններից անկախության/կախվածության մակարդակի վրա երրորդ տարիքային խմբում ազդում են նաև այլ գործոններ: Մեր հետազոտության նպատակից ելնելով՝ դիտարկել ենք այնպիսի գործոն, որը կարող է ազդեցություն

ունենալ մանիպուլյատիվ ներգործության արդյունքում իրականության և տեղեկատվության ձևախեղմանը, զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների հանդեպ կարծիքների և դիրքորոշումների վերափոխմանը: Հետազոտության ընթացքում նման գործոններից դիտարկել ենք սոցիալական վստահության աստիճանի գործոնը:

Ստորև ներկայացված են արտաքին միջավայրային ազդեցություններից հարցվողների փախկապվածությունը սոցիալական վստահության աստիճանից (Աղյուսակներ 1-3):

Variable		Group 1 Witkin Test	Group 1 Trust Scale
1. Group 1 Witkin Test	Spearman's rho	—	
	p-value	—	
	Kendall's Tau B	—	
	p-value	—	
2. Group 1 Trust Scale	Spearman's rho	-0.617 ***	—
	p-value	< .001	—
	Kendall's Tau B	-0.774 ***	—
	p-value	< .001	—

* p < .05, ** p < .01, *** p < .001

Աղյուսակ 1. Արտաքին միջավայրային ազդեցություններից անկախության և սոցիալական վստահության մակարդակների փախկապվածությունը, Խումբ 1

Variable		Group 2 Witkin Test	Group 2 Trust Scale
1. Group 2 Witkin Test	Spearman's rho	—	
	p-value	—	
	Kendall's Tau B	—	
	p-value	—	
2. Group 2 Trust Scale	Spearman's rho	-0.514 ***	—
	p-value	< .001	—
	Kendall's Tau B	-0.548 ***	—
	p-value	< .001	—

* p < .05, ** p < .01, *** p < .001

Աղյուսակ 2. Արտաքին միջավայրային ազդեցություններից անկախության և սոցիալական վստահության մակարդակների փախկապվածությունը, Խումբ 2

Variable		Group 3 Witkin Test	Group 3 Trust Scale
1. Group 3 Witkin Test	Spearman's rho	—	
	p-value	—	
	Kendall's Tau B	—	

Variable		Group 3 Witkin Test	Group 3 Trust Scale
	p-value	—	
2. Group 3 Trust Scale	Spearman's rho	-0.575 ***	—
	p-value	< .001	—
	Kendall's Tau B	-0.418 ***	—
	p-value	< .001	—

* p < .05, ** p < .01, *** p < .001

Աղյուսակ 3. Արտաքին միջավայրային ազդեցություններից անկախության և սոցիալական վստահության մակարդակների փախկապվածությունը, Խումբ 3

Վերը ներկայացված կոռելացիոն դրական կապերը ցույց են տալիս, որ արտաքին միջավայրային ազդեցություններից կախվածության բարձր աստիճանը ուղեկցվում է սոցիալական վստահության աճով: Ստորև բերվում են հարցվողների պատասխանների տոկոսային ցուցանիշներ, որտեղ երևում է մանիպուլյատիվ ներգործության և տեղեկատվության ձևախեղման գործընթացի վրա ազդող սոցիալական վստահության աստիճանի և կոգնիտիվ ոճերի դրսևորումների փոխկապվածությունը (Աղյուսակ 4):

	Սոցիալական վստահության բարջր աստիճան,%	Արտաքին միջավայրային ազդեցություններից կախվածության աստիճան,%	Իմպուլսիվության աստիճան,%	Սինթետիկության աստիճան, %
Խումբ 1	75	68	75	73
Խումբ 2	77	75	84	85
Խումբ 3	93	90	95	94

Աղյուսակ 4. Մանիպուլյատիվ ներգործության և կոգնիտիվ ոճերի դրսևորումների տոկոսային ցուցանիշները

Գիտափորձի մասնակիցների 68 տոկոսը (I ենթախումբ) դրսևորել են արտաքին միջավայրային ազդեցությունից կախվածության բարձր աստիճան: Մասնակիցների շուրջ 25 տոկոսի (II ենթախումբ) մոտ թույլ դրսևորվեց կախվածության աստիճանը, իսկ 10 տոկոսը (III ենթախումբ) գրանցեցին արտաքին միջավայրային ազդեցություններից անկախության բարձր աստիճան: Գիտափորձի բոլոր մասնակիցներին տրվել են նախապես ընտրված

հասարակական կարծիքի ուսումնասիրության հարցումներից որոշ հարցեր և գրանցվել են գիտափորձի մասնակիցների դիրքորոշումները: Այնուհետև նույն հարցերի վերաբերյալ ներկայացվել են տեղեկատվությունը ձևախեղող կարծիքներ, որոնք գիտափորձի մասնակիցները հնարավորություն են ունեցել միասին քննարկելու և վերլուծելու:

Քննարկումներից հետո կրկին ճշգրտվել են մասնակիցների կարծիքներն ու դիրքորոշումներն առաջ քաշված հարցերի վերաբերյալ: Գիտափորձի արդյունքներով պարզ դարձավ, որ տեղեկատվության մանիպուլյատիվ ներգործությանը ենթարկվեցին և փոփոխեցին իրենց նախնական կարծիքները քննարկվող հարցերի շուրջ այն մասնակիցները, ովքեր գրանցել էին առավել բարձր ցուցանիշներ սոցիալական վստահության, արտաքին միջավայրային ազդեցություններից կախվածության, իմպուլսիվության և սինթետիկության բացահայտման մեթոդիկաներով: Պարզ դարձավ, որ արտաքին միջավայրային ազդեցություններից թույլ արտահայտված կախվածության աստիճանի պարագայում թուլանում է տեղեկատվության մանիպուլյատիվ ներգործությունը: Մանիպուլյատիվ ներգործությանը ենթարկվող հետազոտվողների ամբողջ ընտրանքից գերակշիռ մասն էին կազմում կանայք՝ 67%: Բնակության վայրով պայմանավորված ցուցանիշները բաշխվեցին հետևյալ կերպ՝ գյուղաբնակ կանայք – 39%, գյուղաբնակ տղամարդիկ – 28%, քաղաքաբնակ կանայք – 20%, քաղաբնակ տղամարդիկ – 13%: Կրթական մակարդակով պայմանավորված ցուցանիշները հետևյալն էին՝ միջնակարգ կրթությամբ մասնակիցներ՝ 31%, մասնագիտական կրթությամբ՝ 29%, բակալավրի աստիճան ունեցող՝ 21%, մագիստրոսի աստիճան ունեցող՝ 19% մասնակից: Այս ցուցանիշները վկայում են նրա մասին, որ կրթական մակարդակի բարձրացման հետ մեկտեղ համեմատաբար թուլանում է սոցիալական վստահության աստիճանը և, միաժամանակ, նկատվեց արտաքիան միջավայրային ազդեցություններից անկախության,անալիտիկության և ռեֆլեկտիվության մակարդակների որոշակի աճ,ինչը նպաստավոր դարձավ մանիպուլյատիվ ներգործությանը դիմակայելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեսական և փորձարարական հետազոտության արդյունքներով հանգել ենք հետևյալ եզրակացությունների՝

1. Առկա են ակնառու կապեր կոգնիտիվ երկբևեռ ոճերի և մանիպուլյատիվ ներգործության միջև, մասնավորապես զանգվածային սոցիալ-հոգեբնական ընկալումների աղճատումներին նպաստում է իմպուլսիվության և սինթետիկության կոգնիտիվ ոճերի շեշտվածությունը: Ավելին, երևում է որոշակի միտվածություն դեպի ռեֆլեկտիվության և անալիտիկության աստիճանների նվազման՝ տարիքային հատկանիշով պայմանավորված:
2. Արտաքին միջավայրային ազդեցություններից անկախության աստիճանի դրսևորումները բնութագրվում են համեմատաբար կայունությամբ ուսումնասիրվող տարիքային առաջին և երկրորդ

խմբերում: Տարիքային երրորդ խմբում հասարակական կարծիքի դրսևորման անկայունությունը միջավայրային ազդեցություններից ավելի հաճախ է հանդիպում, չնայած նրան, որ պահպանվում է դեպի կախվածության աստիճան կողմնորոշվելու որոշակի միտվածությունը՝ հատկապես կանանց շրջանում:

3. Կոգնիտիվ ոճերի համահարաբերակցական վերլուծության արդյունքներով բացահայտվել են նշանակալի կապեր յուրաքանչյուր տարիքային խմբի ներսում: Մասնավորապես, պարզ է դարձել, որ առավել ուժեղ դրական համահարաբերակցական կապեր են գրանցվել իմպուլսիվության/ռեֆլեկտիվության և սինթետիկության/անալիտիկության կոգնիտիվ ոճերի միջև: Այլ խոսքերով, իմպուլսիվության բարձր մակարդակով անձանց մոտ դիտարկվում է նաև արտահայտված սինթետիկ կոգնիտիվ ոճի գերակայություն: Նույն փոխկապվածությունը նկատվում է ռեֆլեկտիվության - անալիտիկության կոգնիտիվ ոճերի դեպքում: Հատկանշական է, որ նշված ուժեղ կապերը գրանցվել են բոլոր երեք տարիքային խմբերում:
4. Մանիպուլյատիվ ներգործությամբ պայմանավորված՝ զանգվածային դիրքորոշումների փոփոխությունները հիմնականում նկատվել են փոխադարձաբար համեմատաբար մոտիկ տարիքային խմբերում գտնվող մասնակիցների շրջանում:
5. Բացահայտվել է զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների վրա մանիպուլյատիվ ներգործությունը՝ կոգնիտիվ ոճերի և սոցիալական վստահության աստիճանի դրսևորման առանձնահատկություններով պայմանավորված, համաձայն որի՝ նկատվել է միտում հասարակական կարծիքի փոփոխության այն հետազոտվողների մոտ, ովքեր ունեցել են արտաքին միջավայրային ազդեցություններից կախվածության և սոցիալական վստահության բարձր աստիճան և, մյուս կողմից, դրսևորել են իմպուլսիվ և սինթետիկ կոգնիտիվ ոճերի բարձր ցուցանիշներ:
6. Արտաքին միջավայրային ազդեցություններից կախվածության բարձր աստիճանը ուղեկցվում է սոցիալական վստահության աճով: Արտաքին միջավայրային ազդեցություններից թույլ արտահայտված կախվածության աստիճանի պարագայում նույնպես թուլանում է տեղեկատվության մանիպուլյատիվ ներգործությունը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ հրապարակումներում:

1. Երիբեկյան Բ. Ա., Մանիպուլյացիա երևույթի փիլիսոփայական և արժեքային առանձնահատկությունների վերլուծությունը / «Մրցունակ կրթության և գիտության հիմնախնդիրները հարափոփոխ աշխարհում» գիտական հոդվածների ժողովածու միջազգային գիտաժողովի նյութեր /Երևան 2023/ էջ 131-142:

2. Երիբեկյան Բ. Ա., Տեղային ռազմական գործողությունների և կոնֆլիկտների ընկալման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները / Պատերազմի սոցիալ-հոգեբանական հետևանքները միջազգային գիտաժողովի նյութեր /Երևան 2022, 1 (1) էջ 259-265:

3. Yeribekyan Benik, The study of the peculiarities of the psychological perception of the karabakh war in 2020 / «Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր» /Ստեփանակերտ 2022 պրակ. 2/ էջ 302-314:

4. Yeribekyan Benik, Manipulative capacity in the application of the comparison mechanism / «Կաճառ» գիտական պարբերական, 2021, հմ 2 էջ 79-89:

5. Yeribekyan Benik, Analysis of the manipulative use of the archetypes of the collective unconscious / «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտի տեղեկագիր» /Երևան 2021/ VOL. 10 TOM էջ 211-218:

6. Yeribekyan Benik, Analysis of the correlation between manipulative influence and the formation of public anxiety / «Հետազոտական կարողությունների զարգացում» միջազգային գիտաժողով (18 հունիսի. 2021) գիտական հոդվածների ժողովածու /Երևան 2021/ էջ 161-169:

7. Ерибекян Б. А., Анализ феномена незавершённого гештальта в контексте социально-психологического манипулятивного воздействия / «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտի տեղեկագիր» /Երևան 2021/ VOL. 11 TOM էջ 170-176:

8. Ерибекян Б. А., Категория времени как объект социально-психологического манипулирования / «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտի տեղեկագիր» /Երևան 2021/ VOL. 13 TOM էջ 183-189:

9. Ерибекян Б. А., Использование лингвистических средств выражения в контексте социально-психологического манипулятивного воздействия / «Ռուսագիտության արդի հիմնախնդիրներ» գիտամեթոդական հանդես /Երևան 2021, 8 (12) էջ 122-132:

10. Акопян Н. Р., Ерибекян Б. А., Аспекты проявления коммуникативных средств манипулятивного воздействия на человека / «Հանրային կառավարում» գիտական հանդես /Երևան 2021, հմ 2/ էջ 181-187:

11. Ерибекян Б. А., Нарциссическая уязвимость личности подростка как мишень манипулятивного воздействия в процессе формирования интернет-зависимости / «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտի տեղեկագիր» /Երևան 2021/ VOL. 12 TOM էջ 200-205:

12. Yeribekyan Benik, Research of the formation of fake information and the main types of rhetorical practices during the pandemic / «Կաճառ» գիտական պարբերական, 2020, հմ. 2 էջ 44-52:

ЕРИБЕКЯН БЕНИК АЛЕКСАНДРОВИЧ

ВЛИЯНИЕ МАНИПУЛЯЦИИ, НАПРАВЛЕННОЙ НА ИСКАЖЕНИЕ РЕАЛЬНОСТИ И ИНФОРМАЦИИ, НА МАССОВЫЕ СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ЯВЛЕНИЯ

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.03. "Социальная психология".

Защита состоится 30 января 2024 года в 12.00 на заседании специализированного совета по психологии 064 Комитет по высшему образованию и науке по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х.Абовяна по адресу: Ереван, 0010, ул. Тигран Мец, 17.

РЕЗЮМЕ

Актуальность диссертационного исследования обусловлена тем, что проблема манипуляции массовыми социально-психологическими явлениями важна как для формирования гражданского общества, так и для развития социально-психологической науки. В 21-м веке, несмотря на то, что в научной психологической литературе уже сложились определенные мнения и характеристики термина манипуляции, многими исследователями подчеркивается необходимость исследования манипуляции в условиях современного информационного общества.

Цель исследования:

Изучить воздействие манипуляции на массовые социально-психологические явления в контексте искажения информации о реальности, связанное с когнитивными стилями и особенностями.

Основные задачи исследвания:

1. Теоретические:

- представить разносторонние определения феномена манипуляции,

- представить социально-психологическую характеристику современного информационного общества в контексте реализации и восприятия манипуляций,

2. Методологические:

-Характеризовать социально-психологические механизмы воздействия манипуляций, методы влияния на массовые социально-психологические явления,

3. Экспериментальные:

- Определить посредством экспериментального исследования особенности проявлений когнитивных биполярных стилей,

- Выявить гендерный, социальный и образовательный контекст проявления когнитивных стилей,

- Выявить степень зависимости от внешней среды, а также уровень социального доверия в зависимости от гендерных, социальных и образовательных компонентов.

- Провести корреляционный анализ в целях выявления взаимобусловленности когнитивных биполярных стилей и информационных манипуляций, связанных с массовыми социально-психологическими явлениями.

Гипотеза исследования.

Массовое восприятие манипулятивной информации обусловлено особенностями когнитивных биполярных стилей, таких как рефлексивность-импульсивность, аналитичность-синтетичность, а также:

- зависимостью от внешних воздействий окружающей среды,
- выраженностью когнитивных импульсивных и синтетических стилей,
- высоким уровнем социального доверия.

Научная новизна исследования.

Была выявлена взаимосвязь когнитивных биполярных стилей и зависимости от внешней среды и степени социального доверия в процессе формирования массового восприятия манипулятивной информации.

Теоретическая и практическая значимость исследования.

Был применен интегрированный подход теоретического анализа феномена манипуляции, представлены социально-психологические механизмы и манипулятивные методы воздействия в условиях информационного общества. Были выявлены наиболее подверженные манипуляции когнитивные стили, что представляет практическую важность в контексте подготовки специалистов в области коммуникации, а также в контексте обнаружения информационных импульсов в процессе проявления массовых социально-психологических явлений.

Достоверность результатов. Достоверность результатов обусловлена методологической обоснованностью, соответствием цели, гипотезы, задач и методов исследования. Теоретические положения и выводы работы получены на основе многостороннего научного анализа экспериментальных данных.

Апробация и внедрение результатов исследования.

Результаты исследования обсуждались на заседаниях кафедры развития и прикладной психологии АГПУ имени Х. Абовяна, на международных конференциях. Результаты исследования были обобщены в 12-ти научных публикациях.

Структура работы.

Диссертация состоит из теоретической и экспериментальной частей: введения, трех глав, выводов, списка литературы и приложений. Объем работы составляет 146 страниц, без приложений – 141 страниц. Было использовано 239 источника литературы на армянском и иностранных языках.

По теме диссертации опубликовано 12 статей.

YERIBEKYAN BENIK

THE INFLUENCE OF MANIPULATION AIMED AT DISTORTING REALITY AND INFORMATION ON MASS SOCIO-PSYCHOLOGICAL PHENOMENA

Dissertation for pursuing a degree of candidate of psychological sciences in speciality 19.00.03. "Social Psychology". The defence of this thesis will take place on 30 Jenuary, 2024, at 12.00 PM at the session of Degree Awarding commission 064 specializing in Psychology of the The Higher Education and Science Committee of the Republic of Armenia at Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan.

Address: Tigran Mets street 17, Yerevan, Republic of Armenia.

SUMMARY

Actuality.

The relevance of the dissertation research is conditioned by the fact that the problem of manipulation with mass socio-psychological phenomena is important both for the formation of civil society and for the development of socio-psychological science as well. In the 21st century, despite the fact that certain opinions and characteristics of the term of manipulation have already developed in the scientific psychological literature, many researchers emphasize the need to study manipulation in a modern information society.

Objective of the research.

To study the effects of manipulations on mass socio-psychological phenomena in the context of distortion of information about reality associated with cognitive styles and features.

Main tasks of the research are:

1. Theoretical:

- present the versatile definitions of the phenomenon of manipulation,
- present the socio-psychological characteristics of the modern information society in the context of the implementation and perception of manipulations,

2. Methodological:

-characterize the socio-psychological mechanisms of the impact of manipulations, methods of influence on mass socio-psychological phenomena,

3. Experimental:

- determine through experimental research the features of the manifestations of cognitive bipolar styles,
- identify the gender, social and educational context of the manifestation of cognitive styles,
- identify the degree of dependence on the external environment, as well as the level of social trust depending on the gender, social and educational components.

- carry out correlation analysis in order to identify the mutual complexity of cognitive bipolar styles and manipulations with information associated with mass socio-psychological phenomena.

Hypothesis of the research.

The mass perception of manipulative information is due to the features of cognitive bipolar styles, such as reflexivity-pulsivity, analytic-synthetic, as well as:

- dependence on external environmental influences,
- the severity of cognitive impulsive and synthetic styles,
- high level of social trust.

Scientific novelty of the research.

The relationship of cognitive bipolar styles and dependence on the external environment and the degree of social trust in the process of forming mass perception of manipulative information was revealed.

Theoretical and practical significance of the research.

An integrated approach of the theoretical analysis of the phenomenon of manipulation was applied; socio-psychological mechanisms and manipulative methods of influence in the conditions of the information society were presented. Cognitive styles most susceptible to manipulation were identified, which is of practical importance in the context of training specialists in the field of communication, as well as in the context of the detection of information impulses in the process of manifestation of mass socio-psychological phenomena.

Credibility of results.

The reliability of the results is due to methodological validity, the correspondence of the goal, hypothesis, tasks and research methods. Theoretical provisions and conclusions of the work were obtained on the basis of a multilateral scientific analysis of experimental data.

Approbation and adoption of the research results.

The results of the study were discussed at the meetings of the Department of Development and Applied Psychology of ASPU named after Kh. Abovyan, at the international conferences. The results of the study were summarized in 12 scientific publications.

Structure of the thesis.

The dissertation consists of the theoretical and experimental parts: introduction, three chapters, conclusions, a list of literature and applications. The volume of work is 146 pages, without applications - 141 pages. 239 sources of literature in Armenian and foreign languages were used.

Twelve articles have been published on the subject of the thesis.